

[illegible]

Ե. Ջ. Բ. Ե. Յ. Ե.

Եղգասիրութիւն վէ Հայրենասիրութիւն
նույն ձիւմէլէ մալիւմ օւն Խորհրդան
Սկիւտիւ վարդապետ հազգիւնտա մէտհ ու
սէնայէ տայր պուլունան պահարմըր վէ թապ
ու նէշը իթտիրմէքտէ օլտուգլարը Երծու
Սասալուրականնամ ըխալէյի մէմուհէսինին
եէնի իլաւընը պիզ զարուր կէլէճէք տէֆայի
պրագարագ, պու տէֆաքի Հատոր Դ. վէ
թիւ 5 տէ օգուհն վէ տիգգալմէ շայան պու
լունան պիր պահարմըրն ալնէն պէյանէ, Տէր
քէս թսրա ֆընտան մէն.ւնէն վէ թէլէքթիւ
րէն օգուհնուր էմէլի էղէպիլէ, միւսարաւթ
իտէրիզ :

«Եղգային Լեւոնտիւն վարդապետ»

«Հայկազուն նախնի իշխանական դարերուն
մէջ թէ ո՞րքա ըրծարագուստ ատեն կ'ըստ
ուէին ամբողջ Հայաստանի ժողովուրդ կա
ռավարելու համար. այդ կը յիշեն մեզ ազգա
յին պատմիչներու Երծանագրութիւնք: Բիշ
հանուր Հայրապետի համագումար ատեն
չորեքհարիւր վիճակաւոր Եպիսկոպոսաց թե
մական ատենաք. թաղաւորական ատենա
Պոստկալութեանց ատենաք. և Եպիսկոպոսաց
թեմանց ատենա. այսչափ ատենաներու բարձր
դունըրն ո՞վ փակեց, արդեօք իրաւանց անգղու
շուրթիւնը, եթէ տնաւեր ու դռնափակ երկ
պառակութիւնը: Երծմանց քիչ չորս միլի
ոն հայ ժողովուրդը համար նախախնամութիւ
նը երկու մեծ ատենան պահէ. Երարատեան
մայր սթոնին մէջ հաստատուած Սիւնհոգոյի
ատենան. որոյ նախագահ կ'հանդիսանայ ընդ
հանուր Հայրապետ հայր. Կոստանդնու
պօլսոյ ազգային ատենան. որուն նախագահ
կ'նստի ժամանակին Պատրիարքը:

Եհայ այս երկու մեծագոյն ատենանքն են ընդ
հանուր Հայաստանի վարչութեան կառքի
անուոյն առանցքը. գրեթէ ամբողջ Հայոց
յառաջադիմութեան յոյսին եւ անուոյն շջա
նակը այս երկու մեծ առանցքին վերայ կ'դառ
նայ: Եթէ խորտակին գիպուածով այս ա
ռանցքները, յայտնի է վալշութեան կառա
վարն ալ կառքն ալ ուրիշ ամէն պիտանի
հանդամալքերով շուրթած կ'գաղթին ճանա
պարհի ընթացքէն:

Սեր այդ վերնագիրը Լեւոնտիւն սիւնհո
գոսի ատենին համար չէ. վասն զի նորա վար
չութեան անուոյն առանցքը թէ կոտորէ է թէ
ողջ է. ճշմարտութեան կամ ուղիղ օրինաց
ճանապարհի գծին վերայ շիտակ կը թանայ ե
թէ ծուռ. այս մասին ընդ աջ չի դատելով
աւելի ստոյգ կամ առանց անաչառութեան
գրել՝ Ռուսաստանի հայ լրագրաց պարսք
է: Դրացի ու մարմակայ ալքերը աւելի սուր
կը նկատեն քան թէ մեզի պէս ճանապարհոր
դի մի համառօտ անսովեան շուտափոյթ
անցքը: Միայն այսչափ կարող եմք խօսել թէ
Սարսքի Սիւնհոգոսի ատենան աւելի հո
գեւորական է քան թէ քաղաքական կամ ազ
գային. և իւր վարչութեան անիւր կ'դառ
նայ միայն բարձրագոյն կարգադրութեան ա
ռանցքին վերայ. զորոյ բովանդակութիւնը

հրատարակէ Խաւսաց Եղանին աշխարհա
բառ լեզուով: Եյս ատենին օրէնքները կիշ
խեն Ռուսաստանի մասին մէջ եղած գրեթէ
հինգ հարիւր հազար հայ բնակիչներուն վե
րայ:

Սոյն համառօտութենէն ուշիմ ընթերցո
ղք կարող է ինքնին մակարեւել, որ Լեւոնտիւն
նայ Սիւնհոգոյն ընդարձակ իրաւունքներ չու
նի ամէն ազգային դատաստանական վէճերը
վճռելու կամ կարելու, ինչպէս Կոստանդ
նուպօլսոյ Պատրիարքարանի ազգային ատեն
նը: Ռուստի մեր այդ բնաբանին իմաստը մի
այն Պօլսոյ ազգային ատենին վերայ դարձնե
լով՝ սկսեմք խօսիլ:

Տաճկաստանի բոլոր Հայկազունք ծանօթ է
որ Պօլսոյ Պատրիարքարանին ատենան երկու
մասն բաժանուած է. կրօնական կամ հիւղե
ցական ատենան. որուն անդամները սրբազան
ւորոց հմուտ կրօնագէտ եկեղեցականներէն կը
բաղկանան. իսկ միւս ատենան ժողովուրդական
կամ քաղաքական ատենան կ'ըլլուի. որոյ ան
դամներ կ'բաղկանան Պօլսոյ եւ գաւառական
ազգայնոց ընտիր մասերէն. այսինքն քաղա
քական օրէնքներուն տեղեակ բարի համբաւ
ու համարում ունեցող պատուաւոր մարդիկ
ներէն: Սոյն երկու ատենին եւս միայնգամայն
նախագահ կ'հանդիսանայ ժամանակին Պատ
րիարքը: Եհայ բոլոր Տաճկաստանի Հայոց
ազգային վարչութեան գործքերը այս երկու
ատենաներէն կ'սխալում ունին շատ պարագա
ւերու մէջ եւ նորա կարեւոր վճիռներուն կամ
իշխանական հրամանին վերայ կ'դառնան ինչ
պէս կառքի մի անիւնները իրենց առանցքին
վերայ: Հայոց Պատրիարքարանի ատենան
«զատութեան մեծ իրաւունքներ ունի. զոր
(Սամանեան Բարձրագոյն դուռը իբր չորս հար
իւր տարի յառաջ Եղանին առաջին Պատ
րիարքին օրէն շնորհք է իւր իշխանութեան
տակ եղած հպատակ Հայերուն. թէպէտ եւ
դառն ժամանակի միջոցները Հայոց ազատու
թեան իրաւունքները շատ անգամ գործադ
րութեան ուժէն տկարացեր են. երբեմն
եւս ազգային մեծամեծ գործքերը յառաջա
ցուցիք են: Միայն թէ այդ նախնի ատենան
ազգի մէջ գտնուած հարուստ եւ իշխանաւոր
անձիւններէն կ'կազմուէր. ճարտարամիտ ար
հեստաւոր կամ խելօք աղքատը մասն չունէր
նոյն ատենին իբրեւ արժանաւոր անդամ ընտ
րուելու:

Բայց ներկայ դարուս մէջ աւելի բազմա
պատկեցաւ այդ իրաւանց շնորհքը, միջոցեւ
Լեւոնտիւն քաղաքական հրահանգները ողջու
եցին զՏաճկաստան, որով Պատրիարքարանի
ազգային ատենան առջի ժամանակներէն աւել
չի փոքր ի շատէ իւր վարչութեան ընթացքը
կանոնաւորեց: Եյս ատենին վարչութեան
կառքին անուոյն չըլանակը իրիստ մեծ է եւ
իւր բոլորակութեան շառաւիղները կ'տարա
ծին միւնեւ Տաճկաստանի սահմանաճայր
եզերքները և գրեթէ երեք միլիօն Հայոց
ազգային գործքերը այդ յիշեալ վարչութեան
անուոյն վերայ կ'դառնան:

Եհայ սոյն Եղգային կեդրոնական կառավա
րութեան վերայ պիտի խօսեմք այս անգամը.

և թէ ի՞նչպէս ջախջախուելու վիճակին հա
սաւ այս վարչութեան կառք ողջ անիւններով
մէկ տեղը, իւր դիտողութեան չափ հրատա
րակիլ Երծուոյն պարտքն է:

Հարցո՞ւր այժմ, հետաքրքիր ընթերցող,
թէ ինչո՞ւ համար պիտի ջախջախուէր վարչու
թեան կառքը. կամ միջոցեւ ինքն իւր շա
րունակ ընթացքը սկսեր էր նոր շինուած ուղ
ղագիծ ճանապարհի մի վերայ և յաջողու
թեամբ յառաջ կերթար, ո՞ր ապառաժներու
զարնուելով խորտակուելու վիճակին հասաւ.
արդեօք վրան նստող կառավարչին անգղու
լութիւն էր ասոր պատճառ. եթէ լրծուած
«մեհի ձիերու անգղուսպ արշաւանքը. արդեօք
այդ վարչութեան կառքին շէնքը հաստապինդ
կապակցութեամբ ամրացած չէի՞ն մասունք
ներ, որ չգիմացաւ. եթէ առանց մեծամեծ
ապառաժներ հորդելու տարաժամ անհամբ
րութեամբ կառքը ճանապարհին վերայ հա
ւին:

Եյս հանճարաւոր հարցմունքներուդ պա
տասխանը, ազգային լրագրաց Լամբարդները
բաւական օրինաւոր ու ճշգրիտ լուծումները
տուած են, ըստ մեծի մասին ամենուն կար
ծիքները համաձայն են թէ և ոմանց ալ ան
համաձայն. Օտարմանք չէ. վասն զի մարդկա
յին բանադատութիւնը իւր կրից ու կամքին
պահանջման համեմատ կարող է փաստ ու ա
պացոյց ճարել բազմութեան միտքը համոզե
լու. բայց ուղիղ և լուսաւոր բանադատու
թիւն այն է միայն, որ Եստուծոյ օրինաց հա
մաձայն է և մարդկային իրաւանց պայմաննե
րը կ'պահէ, իւր խղճին ու մոտաց ուղիղ դա
տաստանի գծէն երբեք չի խտորիր. այն
պիսին է ահա, որ Վրիստոսի անսուտ պա
տուէրին միտ դնելով՝ ընդ աջ վեր ի վերոյ
դատաստան ընելու չի համարձակեր. հապա
դատաստանը շիտակ տեսնալու համար իւր
մոտաց և արդար խղճին աչքով կ'հայի: Սա
կայն մտաց աչքին ալ լուսաւորութիւն պէտք
է. վասն զի ի՞նչ ճշմարիտ դատաստան կա
րող եւ պահանջել միջոցեւ մտքին ու խղճին
դատաւորը կամ կոյր տգիտութեամբ կ'խառ
խափի և կամ կրից միգախառն ամպերով պա
տած կորոտոյ և կարկուտներ կ'թափէ. կը
յուսան սրդեօք, մոտաց արեւուն դատաստա
նի շառաւիղները կարող են պայծառ շողջո
ղել, ցորչափ իւր գէմքը պատերէ կրից թանձր
մառախուղը: Եյս կիրքերու նշոված անուն
ները գիտե՞ս, ազնիւ ընթերցող, թուեմք ե
զի համար. կիրք հպարտութեան, կիրք նա
խանձու, կիրք ազահութեան և շահասիրու
թեան, կիրք խորամանկութեան և խաբէու
թեան, կիրք կեղծաւոր շողքորդ մարդահա
ճութեան, կիրք փառասիրութեան և անիրաւ
պատուասիրութեան, մանաւանդ ամենէն վատ
կիրք երկպառակութեան. և ասոնցմէ ծնած
անիծից զաւակներուն և թողներուն անուննե
րը ո՞ր մէկ թուեմք քեզ: Եյսպիսի կիրքե
րով զառաճեալ մոտաց դատաւորին աչքը
չ'լ է. ծուռ և թիւր կը տեսնայ ինչ որ տես
այ. Վրիստոսին բժշկած կիսաբաց կոյրին
պէս կ'կարծէ թէ ծառերը մարդիկներուն նման
լուրջ կուգան:

Եյս կիրքերն են ահա մեր ազգային կեդրոնական վարչութեան կառքին անկենդան խորտակող. այս կիրքերն են ճանապարհին վերայ տնկուած մեծամեծ սպառաշունքը. որոնք վարչութեան կառքին ընթացքն արգելելով՝ թող չեն իտար յաջողութեամբ հասնել դէպ ի յառաջագիմութեան նպատակն: Եյս կիրքերն են որ բաւական ժամանակէ ի վեր ազգին խաղաղութիւն վրդովող խռովութեան հակառակահորձ քաղնները փելով՝ ազգային կառք վարչութեան նաւը ծայրերու զարնելով կտոր կտոր արին. միութեան հոգեով բոնեւորած տախտակները իրարմէ բեկբեկելով՝ ո՛հ, ահա կը տատանին Վոսփորի ծովուն ալիքներուն վերայ. նաւապետն և նաւաստիներն առ հասարակ տարակուսած ապշած կեցեր են. նաւահանգիստ նաւահանգիստ խաղաղութիւն խաղաղութիւն, կ'կանչեն:

Եյս սկսնք բացատրել այդչափ զանազան կրից ապառաժներուն զօրութիւնը. թէ ի՞նչպէս ազգային վարչութեան կառքը կէս ճանապարհին վերայ դադարեցուցեր են և բոլորովին խորտակելու կրօնապաշտն թէ որ կազկարծուած ճշմարտութիւնը ժիր ոտքով աճապարելով օգնութեան չի հասնի:

Ինքնահաւան հպարտութեան ապառաժներուն կ'ըբերը, որք է ջանան միշտ իրենց թողութեամբ չափ բարձրացուցանել ազգային ատենին մէջը և կառավարութեան սանձը միայն իրենց բռնող պահել. վարչութեան կառքին դէմը ելան, միջոցառ տեսան, որ արդարութեան քուէն մարդիկներուն արժէք չափելով՝ արժանի կ'տեսնայ զգոն և ճարտարամիտ աղքատներն ալ ազգային վարչութեան անդամ ընտրելու: Կախանձու կ'ըբեն ալ ստոր հետը ընկերանալով հին բանասիրութեան թելադրութեամբ՝ ուղեցին նորատունկ վարչութեան դրախտին մէջը մահ բերել: Եգահութեան և շահասիրութեան կիրքերու ապառաժներն ալ արձանացան վարչութեան ճանապարհին վերայ, միջոցառ տեսան նոր Սահմանադրութեան զգուշաւոր օրէնքները տնտեսական խնայութեամբ ու երկաթիայ նիւթերով կ'փակէ ազգային գանձարանաց դռները, որ երբեք չահախնդիր և կաշառակուր ոտքը չի կարողանան ներս մտնելու: Աստի այս դռները խորտակելու համար ամէն ջանքերը գործի դրին: Խորամանկութեան և խաբէութեան կիրքերու ապառաժներն ալ, երբ տեսան որ պարզ ճշմարտութեան եւ անաղա ազատութեան լոյսեր կ'ցոլանան վարչութեան ատենին մէջը եւ այլ անկարելի է այնուհետեւ խաբէութեան խաւարին գործքերը խորամանկութեան վարագործին տակ պահել, ձեռք զարկին վարչութեան աշտանակը կործանելու, որպէս զի ազգային ատենը մութ մնայ միշտ ու գողութեան ոտքը համարձակ մութ և էլ ընէ: Մարդահաճութեան ու կեղծաւոր շողորթութեան կիրքերու ապառաժներն ալ վարչութեան կառքին դէմը քիչ վառագ չի բերին, երբ տեսան ազգային աղքատ սեղանի բոլորութեան արթուն սպասաւորները պիտի կենան, ալ այնուհետեւ հացկատակ մարդահաճոյն կամ կեղծաւոր շողորթութիւն նոյն սեղանի հացէն բա-

ժին չեններ. խորհեցան ու մտածեցին կուտակցութեան հոգի մի յարուցանել. ուստի աղբէսարարութեան ամէն գունաւոր ու փափուկ ձեւեր ձեւացան. անհիմն ու կարկառուն համոզանքները թափեցին իրենց շողորմաշարժ լէզուէն. միջոցառ կարծել տուին պարզ և դիւրահասան ականջներուն. թէ Վոսթրութեան նոր Սահմանադրութիւնը՝ Հայաստանիսց եկեղեցւոյ օրինաց հիմունքներուն խախտիչ դաղտնի մեքենայ մի է: Եյսպէս, փառասիրութեան կամ անիրաւ պատուաւորութեան միւս կիրքերն ալ իրենց ազդեցութիւնները գործի դնելով՝ ահագին ապառաժներուն պէս շարունեցան ետեւէ ետեւ ճանապարհին իրայ, ուր որ Վարչութեան կառքը իւր ընթացքը պիտի շարունակէր: Միջոցառ անկասկած սուր արշաւանքով մը Վոսթրութեան կառքը ճանապարհ ելաւ, և ահա ի՞նչ, Իրիքովի դարանամուտ աւազակները այսինքն այդ վերոյիշեալ կրից ապառաժներուն խումբը վրան հասան. հարին ու վերաւորեցին. այսօր ճանապարհին վրայ կ'իսամահ ընկած դորովափրտ Սամարացու մը այցելութեան կ'կարօտի:

Եյս դուք յոյս առէք, վարչութեան վերաւորեալ լիզանները, այդ ճանապարհը՝ որ ընկած ես, ամայի չէ. այլ արքունական պալատայ մի է ազատ դատու մէջը, շատուոր են Իկլաւադի ուլեոր ազդասերները. որոնք այսուհետեւ այդ ճանապարհով պիտի տնջին միշտ ու դառնան: Ի՞նչ աչք է, որ այդ քովերքերը տեսնալով՝ քեզ չի գթայ. թէ և շատերը զանցառութիւն ընելով կանցին և դուցէ վա՛շ վա՛շ ալ կ'հարգուն. թէ ընկուղար Վարչութիւն. իսկ դու դժուրակ վերքերուդ ցաւէն յուսահատելով՝ շուտ մի աւանդիր այդ նուիրական հոգիդ. փոքր ինչ երկարաշունչ եղիր ու համբերէ: Եհա Սամարաց ազգասիրաց խումբ մի ճանապարհ ելած քեզ այցելութիւն պիտի ընեն. միայն թէ վարչութեան կառքը ձեռքը մեկդիւր արձակելով՝ հանդուրովի իշու վրայ նստիր, որպէս զի անխախտ մնան ու չը ցնցուին վերքերուդ կապիւրը և դարձեալ արիւնները վազեն ու թալկանաս: Եւանց ամբարտաւանութեան նստիր սիրով ու խոնարհութեամբ այդ իշուն վերայ և դարձիր կրկին Պատրիարքարանին լիւան: Իսկ հիմունքեան վարժապետին միտ դնելով՝ աւելի լաւ է, որ առ այսօր վարչութեան կառքիդ ծանրաբայլ համբերութեան էլ լծես. շուտ և բաւական է, եթէ մեր ազգային յառաջագիմութեան քայլը իշու ոտքի չափ ճանապարհ երթայ: Զե՛ս գիտիր, որ աշխարհիս ճանապարհորդութեան մէջ ուրիշ առաքելութիւնները ամեն հիմքը հեծած կարշաւեն. բայց խեղճ ճշմարտութիւնը կաղ է շու վերայ նըստած դա՛ղդաղ դա՛ղդաղ կ'բալէ: Սակայն թէ ուշ թէ անագան, վերջապէս ողջամբ իւր տեղը կ'հասնի օր մի. միջոցառ մեկալ աճապարող ձիարշաւ առաքելութիւնները ճանապարհի վերայ բազմաւորեալ փորձանքներու կ'պատահին. ու ետ կ'մնան: Աստի թող յոյս առնէ Եգային Վարչութիւնը ու քաջալերէ ինքը զինքը, թող չը յուսահատի միջոցառ ինքն

Եյսպէս աղէմէն Իրիքով իջած ժամանակը՝ այդ ապառաժ կրից աւազակներուն ձեռքն ինկաւ. որոնք ողբէն միջոց ի գլուխը վերքերը քայլէն վառ, արիւնթաթախ ինկաւ ճանապարհին վերայ և իւր ապիպորմ հեծեծանքներուն ձայն, գրեթէ ամբողջ Հայկազանց տքէն արցունքը թափել տուաւ:

Եյս գիտե՛ս ո՛վ տարապարտ խալեալ Սահմանադրական վարչութիւն, այն պաշտպան Տէրն, որ իւր Զիսուս որդւոյն վերքերը գրեց, նոյն պիտի սրբէ ու մի թարե գրեց իրաշնորոգ յարութեամբ: Եյս քո այսօրեան վերքերուդ՝ կակուղ ձևի և պատան պէտք են. այսինքն սէր, անբակ միաբանական հոգի, խաղաղութիւն, հաշտութիւն և վերջապէս երկ յիսմիտ համբերութիւնը: Եյս առաքելութիւններն են, որ քու վարչութեան կառքը ապահովութեամբ կարող են անցուցանել. հագին կրից ապառաժներէն և առանց մեծամեծ փորձանքներու հասցունել ազգային յառաջագիմութեան լիւանին հանգիստը: Եյսպէս առանց մեծամեծ փորձանքներու. խանգ կ'արիւն չէ փոքր փորձանքներէն խոյս տալ. նա և շատ անգամ մեծամեծներէն ևս: Ի՞նչ կ'կարծես, ո՛վ նորածին վարչութիւն, առանց վտանգի, առանց փորձանքի, առանց ուրտաքին և ընտանի թշնամեց, առանց ասպարիտի՝ ազգային բարեկարգութեան մրցասկի առնելով. կ'յուսաս, մի յուսար: Ի՞նչ ազգ կամ թագաւորութիւն կայ աշխարհի թերայ, որն որ առանց ազգային յեղափոխութեան, առանց անձանուէր նահատակութեան կամ ճգանց, յառաջագիմութեան միջանակն դիւրութեամբ ստացած է: Իբրև մալդը՝ բնութեան կարգով ընթացիր, իբրև քրիստոնեայ՝ Զիսուսի օրինակէն համբերութեան և յաղճութեան եղանակը սորվիր. առանց մատնութեան, առանց կապուելոյ, առանց անմեղութեամբ դատաւիտ լինելոյ, առանց մահապարտութեան վճռոյ, առանց Վոլդութայի խաչին, առանց իբր մեռեալ կարծուած գիրեզման իջալու. (ինչպէս յանդգնեցաւ ռուսերմ գրիչ, բու տապանադիրը գրել թէ մեռաւ ու թալեցաւ). լուսափայլ յորութեան կ'ցանկաւ և բարձր Վալիւնային գլուխը քու հաւատարիմ աշակերտներդ ժողովելով՝ կ'սրտապնդեալ իրենք, Եյսպէս յարուցողք, զի ես յաղթեցի աշխարհի: Եյս պիտի յաղթես, եթէ միութեան հետ համբերութիւնը, անդուհալցող հետ սէրը, իմաստութեան հետ, մեծ նոհալանութիւնը իբրև միջոց կամ առաջնորդ պնդես: Զիբաւի փորձանք տարածամ հասաւ քու վրադ. այն ինչ դեռ իբրև նորածին մառկը օրորոց դրուած խանձարուբի մէջն ճընալով ճընալով կարդացիր առաջին բարբառը: Սահմանադրութիւն Սահմանադրութիւն. այս ձայն ծանր թուեցաւ ու զայրացուց ընտանի թշնամիներուդ սիրտը, որք հեղուկիսաբար սուր տուին կուսակից խռովայող շահաւորներն ձեռքը. որպէս զի նորածին փրկիչը կ'եանքը վաղ բառնան և հայրենիքը զկուր քու պատրաստած սպառազ երջանկութեան: Եյս օրէնք, Սահմանադրութիւնը, ողբի մի կամ ժողովրդեանը. փրկիչ և շրջա-

